Հովհաննես Թումանյան

Տենչ

Մեկն էլ այն է հոգուս անթիվ տենչերի,
Որ իմ աչքով տեսնեմ հույզը ջրերի,
Ալեկոծվող օվկիանոսի մի տագնապ.
Ահեղագոչ ալիքները լեռնաչափ

Բարձրանային իրար վրա անդադար
Եվ մրրրիկը նրանց վրա սաստկանար...
Եվ դիտեի ժայռի գլխին ես կանգնած,
Երբ հողմակոծ կոհակները մոլեգնած
Մինչև երկինք փրփուր ու ջուր ցայտեին

Եվ, ոռնալով, բարձր ափերին զարկեին,
Եվ, խորտակված, օրհասական հեծծանքով
Հեռանային խաղաղացած հորձանքով,
Եվ, խլաձայն մռնչալով, նորից նոր
Բարձրանային աղջամղջում հեռավոր.

Նոր հարձակմունք, անհաշտ կռիվ զայրագնած...
Եվ նայեի ժայռի գլխին ես կանգնած:

1892